ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 18.03.2026 ԹՎԱԿԱՆԻ ՓԱՍՏԱԲԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԽՈՒԴՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 25089-2-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը **(այսուհետև՝ Խորհուրդ)** ՝ նախագահությամբ Ցոլակ Մարգարյանի, խորհրդի անդամներ՝ Ռոման Ահարոնյանի, Պավել Գյուլումյանի, Մարինե Ֆարմանյանի, Վարազդատ Հարությունյանի, Լիլիթ Ղազանչյանի և Արսեն Հարությունյանի.

բանավոր ընթացակարգով քննության առնելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.03.2026 թվականի թիվ ԿԳ-25089-2-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների և հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչության պետ՝ Գրիգոր Մնոյանը **(այսուհետև՝ Դիմող),** դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետև նաև՝ Պալատ),** հայտնել է, որ փաստաբան Հովհաննես Խուդոյանը հանդիսանում է թիվ 58223225 քրեական վարույթով Վազգեն Գալստանյանի պաշտպանը և պարբերաբար հանդես է գալիս հրապարակային ելույթներով քրեական վարույթին վերաբերող հանգամանքներով:

Դիմումի համաձայն՝ փաստաբան Հովհաննես Խուդոյանը «Ֆեյսբուք» սոցիալական կայքի «Hovhannes Khudoyan» էջում կատարել է որոշակի հրապարակումներ:

Մասնավորապես,

- 11.09.2025 թվականին կատարվել է հետևյալ հրապարակումը՝ *«Այսօր ԱԺ-ում էլի*

ակտիվացել էին տեղեկատվական ահաբեկիչները, հին ստերն էին բերում, արդեն բացահայտված կեղծիքներին նոր մեկնաբանություններ էին տալիս, մեկն էլ միտք երկնեց, որ դե եթե փաստաբանները այլ նյութերի մասին բան չեն ասել, ուրեմն մնացած ամեն ինչ նորմալ է:

Չէ, չսիրելիներ, այդքան մի շտապեք, նոր բաներ էլ են լինելու, ուղղակի մոլորության մեջ մի ընկեք, որ պաշտպանական մարտավարությունը պիտի կառուցվի ձեր քմահաճույքով:

Առաջնայինը, որ անհրաժեշտ էր այս փուլում, արդեն արվել է՝ ԱՊԱՑՈՒՑՎԵԼ Է, որ ***դուք, ձեր քննչականի պետը, ձեր գլխավոր դատախազը ստախոսներ եք****: Մնացածը՝ շուտով:»*

- 04.10.2025 թվականին կատարվել է հետևյալ հրապարակումը՝ *«ԱՆՊԱՏՎԱԲԵՐ Է ՔՆՆԻՉ, ԴԱՏԱԽԱՋ ԿԱՄ ԴԱՏԱՎՈՐ ԼԻՆԵԼԸ, ՔԱՆԻ ԴԵՌ ՀԱԼԱԾՎՈՒՄ ԵՆ ՍՐԲԱՋԱՆՆԵՐԸ*

Զինվորական ծառայության մեջ, գոնե իմ ծառայության տարիներին, կար պատասխանատվության հեստաքրքիր, գուցե ոչ միշտ արդար, բայց շատ արդյունավետ եղանակ՝ խմբային պատասխանատվությունը. զինծառայողի թերացման համար պատասխանատու է ողջ ստորաբաժանումը: Ընդ որում, դա կանոնագրքերով չնախատեսված պատժի ձև էր: Վատ բան է արել զինծառայողը. ոչ թե գրավոր վարույթով նկատողություն է ստանում կամ զրկվում արձակուրդից, այլ շատ արագ ամբողջ ստորաբաժանումը դուրս է գալիս ֆիզպատրաստության դասի, կամ վարժվում քիմիական զենքից պաշտպանության միջոցներին՝ հակագազով վազք և այլն: Անառողջ միջավայրի դեպքում կարող է կոնֆլիկտներ առաջացնել ստորաբաժանման մեջ, բայց գոնե իմ ծառայության ընթացքում բոլորը պատվով էին ընդունում կոլեկտիվ պատասխանատվությունը:

Նրանից հետո, երբ քննչականն ու դատախազությունը, դատարանները սկսել են ակնհայտ ապօրինի ու հակաբարոյական հալածանքները Հայ առաքելական եկեղեցու հոգևորականների նկատմամբ, իմ պարտքն եմ համարում նախ իմ կողմից կիրառել կոլեկտիվ պատասխանատվության միջոց բոլոր քննիչների, դատախազների ու դատավորների հանդեպ, ապա և քարոզել ու համոզել գործընկերներիս միանալ այդ գործին:

Բոլոր ծառայամիտ քննիչներն են նպաստել այն համակարգի ստեղծմանը, որ իրենցից պատահական մեկը գործ կարի հոգևորականների վրա: Բոլոր պարկեշտ ու բարեխիղճ քննիչներն էլ են մեղավոր, որ համակերպվել են այդպիսի համակարգում աշխատելու ու իրենց գործընկերների ձեռքը չբռնելու մտքի հետ:

Եվ բոլոր դատախազներն են մեղավոր, որ ստեղծել են այնպիսի գերատեսչություն, ***որի ղեկավարը կարող է բացահայտ սուտ խոսել ու չկարմրել:*** *Բոլոր դատախազներն են մեղավոր, պարկեշտ թե անպարկեշտ, որ իրենց գործընկեր Հայկ Հովհաննիսյանը ցանկանում է կալանավորված տեսնել ծանր հիվանդությունից հրաշքով ապաքինված մարդուն:*

Եվ բոլոր դատավորներն են մեղավոր, որ դատական իշխանությունը քաղաքական

պատվերների են ենթարկել այն աստիճանի, որ անհաղորդ են բոլոր մարդկային արժեքներին:

Չէ, բնականաբար, ես որոշիչ դեր չունեմ այս մարդկանց կյանքում, ինձնից շատ բան կախված չէ: Բայց խոստանում եմ, որ քանի դեռ իրենց կողմից հալածված են հոգևորականները, ես ընտրում եմ հաղորդակցության դեստրուկտիվ եղանակը:

Այսուհետ անհանդուրժող եմ լինելու նույնիսկ ամենաչնչին թերացման դեմ, լինի դա դատական ակտը մեկ օր ուշացնել, թե ընտանեկան առիթով նիստ հետաձգելու անհրաժեշտություն, դատավարական փաստաթղթի մեջ առկա վրիպակ, թե քննչական գործողության հարմար ժամի ընտրություն:

Խոսելու ենք չոր օրենքով, առանց մարդկային վերաբերմունքի: Եթե դժգոհ եք, որ ձեր դեմ կարգապահական պատասխանատվության դիմում եմ ներկայացրել կամ հաղորդում, ըմբռնումով չեմ մոտենում ձեր անձնական խնդիրներին, ***բողոքները կհասցեագրեք Արմինե Մելիքսեթյանին, Արգամ Դալլաքյանին, Հայկ Հովհաննիսյանին և ընկերներին, հանրությանը չերևացող, բայց իրենց սև գործն անող քննիչներին:***

Քանի դեռ այս մարդիկ ձեր գործընկերներն են, անպատվաբեր է լինել քննիչ, դատախազ, դատավոր:»:

- 08.10.2025 թվականին կատարվել է հետևյալ հրապարակումը՝ ***«Նիկոլը էսօր հանդիպել է այլ նիկոլների, խոսել են իրենց պատկերացրած բարոյականությունից:***

Պարզվում է, էսօր այլ նիկոլների մասնագիտական օրն է եղել, որը հեչ շնորհավորելու բան չի, քանզի քանի դեռ կալանավորված են սրբազաններ, ՔՆՆԻՉ ԼԻՆԵԼԸ ԱՄՈԹ Է:»:

Պալատի նախագահի 07.11.2025 թվականի թիվ 316-Ա/ԿԳ-25089 որոշմամբ փաստաբան Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի **(այսուհետև նաև՝ Օրենք)** 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետև նաև՝ Կանոնագիրք)** 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետև նաև՝ Հանձնաժողով)** 18.03.2026 թվականին կայացրել է թիվ ԿԳ-25089-2-Ա որոշումը, որով փաստաբան Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանի նկատմամբ կիրառել է կարգապահական տույժ՝ նկատողություն:

2. <u>ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.03.2026 թվականի թիվ ԿԳ-25089-2-Ա որոշման էությունը.</u>

Հանձնաժողովը հաստատված է համարել, որ փաստաբան Հովհաննես Խուդոյանն իր «Ֆեյսբուք» սոցիալական կայքի «Hovhannes Khudoyan» էջում կատարել է վերը նշված հրապարակումները:

Հանձնաժողովը գտել է, որ Փաստաբանի կողմից օգտագործված ձևակերպումները պարունակում են կոշտ, վիրավորական, արժեզրկող և ընդհանրացնող բնույթի արտահայտություններ՝ ուղղված քննիչների, դատախազների և դատավորների նկատմամբ:

Հանձնաժողովը եզրահանգել է, որ Փաստաբանի վարքագծում առկա են «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներ:

Տույժի ընտրության հարցում Հանձնաժողովը հաշվի է առել, որ Փաստաբանը 2021-2026 թվականների ընթացքում կարգապահական տույժ չի ունեցել, ինչպես նաև այն հանգամանքը, որ Փաստաբանի հրապարակումներին նախորդել են ՀՀ քննչական կոմիտեի կողմից կատարված քննադատական հրապարակումները: Վերոգրյալի հաշվառմամբ Հանձնաժողովը Փաստաբանի նկատմամբ կիրառել է ամենամեղմ կարգապահական տույժը՝ նկատողություն:

3. <u>Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը.</u>

Բողոքաբերը Հանձնաժողովի որոշման դեմ ներկայացված բողոքով խնդրել է բեկանել Հանձնաժողովի 18.03.2026 թվականի թիվ ԿԳ-25089-2-Ա որոշումը և կարճել կարգապահական վարույթը՝ կարգապահական պատասխանատվության հիմքերի բացակայության պատճառաբանությամբ:

Բողոքաբերը, ըստ էության, ներկայացրել է հետևյալ հիմնական փաստարկները.

Բողոքաբերի գնահատմամբ՝ Հանձնաժողովը պատշաճ չի բացահայտել հրապարակումների բովանդակությունը, դրանց համատեքստը և դրանք սխալ է դիտարկել որպես քրեական վարույթի կամ կոնկրետ պաշտոնատար անձանց նկատմամբ անհատականացված վիրավորանք:

Բողոքաբերը նշել է, որ հրապարակումները կատարվել են հանրային, քաղաքական և հասարակական կարևորություն ունեցող իրադարձությունների համատեքստում և վերաբերում են իրավապահ մարմինների գործունեության նկատմամբ հանրային քննադատությանը:

Բողոքաբերի պնդմամբ՝ Հանձնաժողովը դուրս է եկել իր լիազորությունների շրջանակից՝ գնահատելով Փաստաբանի քաղաքական խոսքը և քաղաքական ենթատեքստ ունեցող արտահայտությունները:

Բողոքաբերը նաև պնդել է, որ Հանձնաժողովը չի հիմնավորել, թե ինչպես են նշված հրապարակումները կասկածի տակ դրել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Բողոքաբերը, վկայակոչելով արտահայտվելու ազատության սահմանադրական և կոնվենցիոն երաշխիքները, գտել է, որ իր հրապարակումները գտնվում են պաշտպանված խոսքի շրջանակում և չեն կարող կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսանալ:

<u>4. Դիմողի համառոտ դիրքորոշումը.</u>

Դիմողը նշել է, որ պնդում է նախկինում ներկայացրած իր դիրքորոշումը:

<u>5. Բողոքի քննության ընթացքը.</u>

Փաստաբանը ներկայացրել է միջնորդություն՝ ՀՀ փաստաբանների պալատի

կարգապահական հանձնաժողովի 18.03.2026 թվականի թիվ ԿԳ-25089-2-Ա որոշման դեմ ներկայացված բողոքը բանավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ:

Խորհուրդը քննարկել է ներկայացված միջնորդությունը և բավարարել այն:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել՝ 07.07.2026թ. ժամը 18:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

6. Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբանի նկատմամբ Պալատի նախագահի 07.11.2025 թվականի թիվ 316-Ա/ԿԳ-25089 որոշմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներով:

2. Փաստաբանի կողմից 11.09.2025 թվականին, 04.10.2025 թվականին և 08.10.2025 թվականին «Ֆեյսբուք» սոցիալական կայքում կատարվել են հրապարակումներ, որոնց բովանդակությունը Հանձնաժողովի կողմից վերարտադրվել է որոշման մեջ:

3. Նշված հրապարակումների կատարման փաստը Փաստաբանի կողմից չի վիճարկվել:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, ուսումնասիրելով բողոքը, կարգապահական գործի նյութերը, Հանձնաժողովի որոշումը, գտնում է, որ Հանձնաժողովի որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 39.11-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննության ժամանակ* ***խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:***

Օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ *բողոքի քննությունից հետո խորհուրդը կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) կարգապահական հանձնաժողովի որոշումն անփոփոխ թողնելու մասին.

2) կարգապահական հանձնաժողովի որոշումն ամբողջությամբ կամ մասնակի վերացնելու մասին:

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Կանոնագրքի նշված իրավադրույթի խախտման փաստը պարզելու համար

Խորհուրդն անհրաժեշտ է համարում պատասխանել հետևյալ հարցադրումներին՝

- արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում.

- արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետև՝ Կոնվենցիա) 10-րդ հոդվածի պահանջները.

- արդյո՞ք փաստաբանն իր գործունեությամբ խուսափել է գործել այլ բնագավառներում այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

7.1.1 Արդյո՞ք Փաստաբանի վարքագծի կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը և արդյո՞ք այդ սահմանափակումը կարող է դիտարկվել «օրենքով նախատեսված սահմանափակման» համատեքստում:

Խորհուրդը գտնում է, որ Կանոնագիրքը կարող է սահմանափակել փաստաբանի վարքագիծը, այդ թվում՝ արտահայտվելու իրավունքը, և այդ սահմանափակումը պետք է դիտարկել որպես օրենքով նախատեսված սահմանափակում՝ հետևյալ պատճառաբանությամբ:

Տվյալ դեպքում նախ և առաջ անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված փաստաբանի ազատ արտահայտվելու իրավունքի սահմանափակումները դիտվում են «**օրենքով նախատեսված սահմանափակման**» համատեքստում, թե՝ ոչ:

KINCSES v. HUNGARY գործով 27.01.2015թ. որոշմամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ ***դիմողի արտահայտվելու ազատությանը միջամտությունը հիմնված է 1998 թվականի թիվ 11 ակտի[1] 37ա և 38 հոդվածների վրա, հետևաբար՝ նախատեսված է եղել օրենքով[2]***:

Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենքի (թիվ 11 ակտի) 37ա հոդվածի համաձայն՝ *փաստաբանի կողմից կարգապահական խախտումը համարվում է կատարված, եթե նա ..... խախտել է փաստաբանի էթիկայի նորմերով նախատեսված պարտավորությունները*:

Նշված օրենքի 38-րդ հոդվածը խոսում է Հունգարիայի փաստաբանների պալատի կողմից կիրառվող կարգապահական տույժերի տեսակների մասին:

Հետևաբար, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հունգարիայի փաստաբանը փաստաբանական պալատի կողմից կարգապահական պատասխանատվության էր ենթարկվել Փաստաբանների էթիկայի կանոնների 12.1 և 15.2 կետերի խախտման համար,

[1] Հունգարիայի փաստաբանության վերաբերյալ օրենք:
[2] Տե՛ս KINCSES v. HUNGARY 27.01.2015 (no. 66232/10, § 27)

ապա **միանշանակ կարելի է փաստել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ փաստաբանի արտահայտվելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ դրույթները, որոնք սահմանված են փաստաբանների էթիկայի նորմերով, Կոնվենցիայի տեսանկյունից հավասարեցվում են օրենքով նախատեսված սահմանափակումներին:**

Նույն կերպ պետք է ընկալել Պալատի կողմից հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումները, քանի որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և **փաստաբանի վարքագծի կանոնագրքի** պահանջները խախտելու համար.....:*

7.1.2. Արդյո՞ք խախտվել է ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի և Կոնվենցիայի 10-րդ հոդվածի պահանջները, սույն կարգապահական գործով:

ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել **միայն օրենքով**՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ **այլոց պատվի ու բարի համբավի** և այլ հիմնական իրավունքների և ազատությունների **պաշտպանության նպատակով**:*

Այդպիսի կարգավորում ունի նաև Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ *այս ազատությունների իրականացումը, քանի որ այն կապված է պարտավորությունների և պատասխանատվության հետ, կարող է պայմանավորվել այնպիսի ձևականություններով, պայմաններով, սահմանափակումներով կամ պատժամիջոցներով, **որոնք նախատեսված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում**՝ ի շահ պետական անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակության անվտանգության, անկարգությունները կամ հանցագործությունները կանխելու, առողջությունը կամ բարոյականությունը, ինչպես և այլ անձանց հեղինակությունը կամ իրավունքները պաշտպանելու, խորհրդապահական պայմաններով ստացված տեղեկատվության բացահայտումը կանխելու կամ արդարադատության հեղինակությունն ու անաչառությունը պահպանելու նպատակով:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մեկնաբանելով համացանցում արտահայտվելու ազատության պաշտպանության շրջանակների հարցը, նշել է, որ անձի արժանապատվության նկատմամբ ոտնձգությունը կարող է արտահայտվելու ազատության իրավունքի պաշտպանության շրջանակից դուրս լինել, եթե դա անիմաստ վիրավորանք է, օրինակ՝ երբ վիրավորական հայտարարության միակ նպատակը անձին վիրավորելն է:[3]

Կարևոր է պարզել, թե Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի լույսի ներքո արդյոք փաստաբանի վարքագծի սահմանափակումը եղել է իրավաչափ, թե՝ ոչ:

---

[3] CASE OF MAGYAR TARTALOMSZOLGÁLTATÓK EGYESÜLETE AND INDEX.HU ZRT-ն ընդդեմ Հունգարիայի, թիվ 22947/13, 02/02/2016, § 76:

ա) Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի, 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 27-րդ հոդվածի և 39-րդ հոդվածի համաձայն, հաշվի առնելով KINCSES v. HUNGARY գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 27.01.2015թ. որոշմամբ[4] բերված իրավական դիրքորոշումները, Փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված սահմանափակումներն ամբողջությամբ տեղավորվում են Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված «***որոնք նախատեսված են օրենքով***» հասկացության մեջ:

Եվրոպական դատարանի նշված գործով փաստական հանգամանքները նույնական են, այնքանով, որքանով՝ KINCSES v. HUNGARY գործով դիմողը փաստաբան է և վերջինիս պատասխանատվության է ենթարկել փաստաբանական պալատն արտահայտվելու համար՝ փաստաբանի էթիկայի կանոնների խախտման հիմքով: Հունգարիայի փաստաբանության օրենսդրությունը էթիկայի կանոնների մասով նույնպես վկայակոչող (բլանկետային) է և հղում է կատարում արդեն փաստաբանական պալատի սահմանած էթիկայի կանոններին:

բ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք Պալատը, փաստաբանի արտահայտվելու ազատությունը Կանոնագրքով սահմանափակելով, իրավաչափ նպատակ է հետապնդել պաշտպանելու այլ անձանց հեղինակությունը, թե՝ ոչ: Նշվածը պարզելու համար նախ պետք է մեջբերել Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ և 5-րդ կետերը, այն է՝ Փաստաբանների պալատի խնդիրներն են՝ *4) վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից ..... փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման ..... նկատմամբ. 5) միջոցներ ձեռնարկել **փաստաբանության** հեղինակության բարձրացման ուղղությամբ*: Փաստաբանության հասկացությունը տրված է նույն օրենքի 3-րդ հոդվածում, որի համաձայն՝ *Փաստաբանությունը **փաստաբանների մասնագիտական միավորում է,** որը, հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ:*

Նշված իրավական նորմերի վերլուծությունից միանշանակ պարզ է դառնում, որ Պալատի խնդիրներից է բարձր պահել ՀՀ բոլոր փաստաբանների միավորման արդյունքում ձևավորված կառույցի հեղինակությունը, և հետևաբար, Պալատի մարմին հանդիսացող Պալատի Հանձնաժողովի կողմից այն փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելը, որը խախտել է Կանոնագրքի համապատասխան պահանջը՝ դրանով իսկ բացասաբար ազդելով բոլոր փաստաբանների հավաքական միավորում հանդիսացող փաստաբանության հեղինակության վրա:

գ) Կոնվենցիայի 10-րդ հոդվածի 2-րդ մասի մյուս կարևոր պայմանն այն է, թե արդյոք ժողովրդավարական հասարակության համար նման միջամտությունն անհրաժեշտ էր և հետևաբար, արդյո՞ք պահպանվել էր այն հավասարակշռությունը մի կողմից փաստաբանության հեղինակության պաշտպանության, և մյուս կողմից անձի արտահայտվելու ազատության սահմանափակման միջև: Այս հարցին անդրադառնալու համար նախ և առաջ անհրաժեշտ է խոսել հասարակությունում փաստաբանության դերի և նշանակության մասին:

[4] Տես՝ ՀՀ դատական օրենսգրքի 15-րդ հոդվածի 4-րդ մաս

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային որոշումների համաձայն՝ *փաստաբաններն իրենց հատուկ կարգավիճակով պայմանավորված՝ որպես միջնորդ, կենտրոնական դիրք են զբաղեցնում հանրության և դատարանների միջև արդարադատության իրականացման գործընթացում: Նման կարգավիճակով է բացատրվում նրանց վարքագծի նկատմամբ սովորաբար կիրառվող սահմանափակումները որպես փաստաբանական միության անդամ*[5]*:*

Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության համար:

Կանոնագրքի 1.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական գործունեության սկզբունքները ձևավորվել են Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կողմից, երաշխավորելու փաստաբանի պատշաճ գործունեությունը, ինչին բոլոր քաղաքակիրթ հասարակությունները կարևոր նշանակություն են տալիս: Սկզբունքների ձևավորման համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության փաստաբանների կողմից ձևավորված ավանդույթները, ինչպես նաև* ***Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի***[6] ***կողմից սահմանած «Եվրոպայի փաստաբանների համար վարքագծի կանոնագրքի» դրույթները****:*

Պալատի կանոնադրության 2.2 կետի 8-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանների պալատը հետապնդում է նաև հետևյալ նպատակները և խնդիրները՝* ***նպաստել*** *Հայաստանի Հանրապետության լիակատար ինտեգրմանը եվրոպական կառույցներում, Հայաստանի Հանրապետության օրենսդրության ներդաշնակեցմանը եվրոպական չափանիշներին,* ***եվրոպական իրավական ստանդարտների և ավանդույթների արմատավորմանը****:*

Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (այսուհետ՝ նաև CCBE) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ կոմենտարների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ*

---

[5] Տե՛ս Casado Coca v. Spain գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, 24.02.1994թ. վճիռը (§ 54):

առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը[7]*:*

ՀՀ Սահմանադրական դատարանի 2016թ. ապրիլի 5-ի թիվ ՍԴՈ-1263 որոշմամբ դատարանը նշել է. *«Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ի տարբերություն 2005թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի, որի 1-ին մասի 1-ին նախադասությամբ ամրագրված դրույթով սահմանված էր իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, 2015թ. խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 64-րդ հոդվածը, որը վերաբերում է դիտարկվող իրավունքին, պարունակում է 2-րդ մաս, որի 1-ին նախադասությամբ ամրագրված է հետևյալ դրույթը. "Իրավաբանական օգնություն ապահովելու նպատակով երաշխավորվում է անկախության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության վրա հիմնված փաստաբանության գործունեությունը»: Դրանով իսկ պետությունն ընդլայնել է որակյալ իրավաբանական օգնություն ցուցաբերելու իր պոզիտիվ պարտականության շրջանակները* ***<u>սահմանադրական մակարդակի բարձրացնելով փաստաբանության որպես որակյալ իրավաբանական օգնություն տրամադրող ինստիտուտի դերը</u>****»:*

Ամփոփելով վերը նշվածը՝ կարելի է եզրակացնել, որ կշեռքի մի նժարի վրա դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս:

Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության համար:

7.1.3 արդյո՞ք փաստաբանն իր գործունեությամբ խուսափել է մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառներում այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

[7] Տե՛ս CCBE A Commentary on the Charter of Core Principles of the European Legal Profession

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական և այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Սույն ենթակետով փաստաբանի վրա դրվում է նեգատիվ պարտականություն խուսափելու այնպիսի վարքագծից, որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Փաստաբանի վարքի նկատմամբ հարաբերականորեն խիստ սահմանափակումները պայմանավորված են փաստաբանի մասնագիտության առանձնահատուկ բնույթով և հանրային բարձր կարգավիճակով, որը պայմանավորված է փաստաբանության՝ որպես իրավապաշտպան գործունեության մեծ կարևորությամբ: Փաստաբանը հանդիսանում է հասարակության հատուկ սուբյեկտ, ով ստանձնել է իր առանձնահատուկ դերը՝ իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի շնորհիվ և որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող սուբյեկտ նպաստում է արդարադատության իրականացմանը: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն վստահորդների հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ: Փաստաբանի մասնագիտական գործունեության հանդեպ հարգանքը կարևոր պայման է հասարակության մեջ իրավունքի գերակայության և ժողովրդավարության ընկալման համար:

Սույնի համատեքստում փաստաբանի վրա են դրվում են բազմազան իրավական և բարոյական պարտավորություններ, և նրա նկատմամբ գործում են առանձնահատուկ պահանջներ՝ կապված անձնական վարքագծի հետ. լինի դա մասնագիտական գործունեության, թե այլ ոլորտներում:

Տվյալ պարագայում Խորհուրդը նախ անհրաժեշտ է համարում ընդգծել, որ փաստաբանի քաղաքական համոզմունքները, հանրային նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ դիրքորոշումները կամ պետական մարմինների գործունեության նկատմամբ քննադատությունն ինքնին չեն կարող կարգապահական պատասխանատվության հիմք հանդիսանալ: Փաստաբանը, ինչպես յուրաքանչյուր անձ, օգտվում է կարծիքի արտահայտման ազատությունից, այդ թվում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող հարցերի վերաբերյալ քննադատական դիրքորոշում արտահայտելու իրավունքից:

Կանոնագրքի 1.2 ենթակետի վերջին պարբերության համաձայն՝ սույն կանոնագիրքը տարածվում է նաև փաստաբանի հրապարակային վարքագծի նկատմամբ, բացառությամբ այն դեպքի, երբ փաստաբանն այդ իրավիճակում ակնհայտ գործել է այլ՝ (ոչ փաստաբանի) կարգավիճակով:

Նշված կարգավորումից հետևում է, որ փաստաբանի հրապարակային վարքագիծը, այդ թվում՝ սոցիալական ցանցերում արված հրապարակումները, որպես կանոն, ենթակա են փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների գնահատման: Կանոնագրքի կիրառելիությունը բացառվում է միայն այն դեպքում, երբ տվյալ իրավիճակից ակնհայտ է, որ անձը հանդես չի եկել փաստաբանի կարգավիճակով: Ընդ որում, նման բացառությունը

չի կարող ենթադրվել միայն այն հանգամանքից, որ խոսքն արվել է սոցիալական ցանցում կամ պարունակել է քաղաքական, հասարակական կամ հրապարակախոսական բնույթի գնահատականներ:

Սույն գործով Խորհուրդը նման բացառիկ հանգամանք չի արձանագրում: Վիճարկվող հրապարակումների բովանդակությունից ակնհայտ է, որ դրանք պայմանավորված են եղել Փաստաբանի կարգավիճակով: Այս պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի հրապարակային վարքագիծը ենթակա է գնահատման Կանոնագրքի 2.2.2 ենթակետի տեսանկյունից: Միաժամանակ, Խորհուրդը վերահաստատում է, որ գնահատման առարկան Փաստաբանի քաղաքական հայացքների կամ հանրային նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ դիրքորոշման բովանդակային իրավաչափությունը չէ, այլ այն, թե արդյոք այդ դիրքորոշման արտահայտման ձևը, օգտագործված բառապաշարը և ընդհանրացնող բնույթը կարող էին կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:

Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի կողմից կատարված հրապարակումները չեն սահմանափակվել պետական մարմնի, քրեական վարույթի, առանձին դատավարական գործողության կամ կոնկրետ պաշտոնատար անձի հայտարարության իրավական քննադատությամբ: Դրանցում օգտագործվել են այնպիսի ձևակերպումներ, ինչպիսիք են՝ «դուք, ձեր քննչականի պետը, ձեր գլխավոր դատախազը ստախոսներ եք», «բոլոր դատախազներն են մեղավոր», «հանրությանը չերևացող, բայց իրենց սև գործն անող քննիչներ», «անպատվաբեր է լինել քննիչ, դատախազ, դատավոր», «ՔՆՆԻՉ ԼԻՆԵԼԸ ԱՄՈԹ Է»: Նշված արտահայտություններն իրենց բովանդակությամբ ուղղված են ոչ թե կոնկրետ իրավական դիրքորոշման, դատավարական գործողության կամ պաշտոնատար անձի վարքագծի քննադատությանը, այլ ամբողջ մասնագիտական խմբերի՝ քննիչների, դատախազների և դատավորների ընդհանրացված բացասական բնութագրմանը:

Խորհուրդը փաստում է, որ փաստաբանը կարող է քննադատել քննիչի գործողությունը, դատախազի դիրքորոշումը, դատարանի որոշումը կամ իրավապահ մարմնի հրապարակային հայտարարությունը, այդ թվում՝ կոշտ և սուր ձևակերպումներով: Սակայն «քննիչ լինելը ամոթ է» կամ «անպատվաբեր է լինել քննիչ, դատախազ, դատավոր» ձևակերպումները քննադատության առարկա են դարձնում ոչ թե կոնկրետ գործողությունը կամ իրավական դիրքորոշումը, այլ տվյալ մասնագիտությամբ զբաղվելու փաստը: Այդպիսի ընդհանրացնող մոտեցումը կարող է հանրության մոտ ձևավորել այն ընկալումը, որ փաստաբանը, լինելով իրավական համայնքի անդամ և արդարադատության իրականացման գործընթացի մասնակից, չի պահպանում իրավական համակարգի այլ մասնակիցների նկատմամբ մասնագիտական հարգանքի նվազագույն չափանիշը:

Խորհուրդը կարևորում է նաև այն հանգամանքը, որ Փաստաբանի հրապարակումները կատարվել են ոչ թե սահմանափակ դատավարական հաղորդակցության շրջանակում, այլ հանրային հասանելիություն ունեցող սոցիալական ցանցում: Հետևաբար դրանց ազդեցության շրջանակը չէր սահմանափակվում կոնկրետ քրեական վարույթի կողմերով կամ վարույթն իրականացնող մարմնով, այլ հասանելի է

եղել անորոշ թվով անձանց՝ այդպիսով ազդելով փաստաբանի և փաստաբանության հանրային ընկալման վրա:

Անդրադառնալով Փաստաբանի այն փաստարկին, որ Հանձնաժողովը գնահատել է քաղաքական խոսքը՝ Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովի որոշման մեջ քաղաքական ենթատեքստ ունեցող առանձին արտահայտությունների վերաբերյալ տրված որոշ գնահատականներ դուրս են սույն կարգապահական գործի լուծման համար անհրաժեշտ իրավական գնահատման շրջանակից: Այնուամենայնիվ, Խորհուրդը գտնում է, որ նշված հանգամանքը բավարար չէ Հանձնաժողովի որոշումը վերացնելու համար:

Սույն գործով կարգապահական պատասխանատվության հիմքում դրված են ոչ թե Փաստաբանի քաղաքական հայացքները կամ քաղաքական գնահատականները, այլ այն արտահայտությունները, որոնք ուղղված են քննիչների, դատախազների և դատավորների մասնագիտական խմբերի ընդհանրացված արժեզրկմանը և իրենց բնույթով կարող են կասկածի տակ դնել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունն ու հարգանքը: Այդպիսի արտահայտություններ են, մասնավորապես, «ստախոսներ եք», «բոլոր դատախազներն են մեղավոր», «հանրությանը չերևացող, բայց իրենց սև գործն անող քննիչներ», «անպատվաբեր է լինել քննիչ, դատախազ, դատավոր», «ՔՆՆԻՉ ԼԻՆԵԼԸ ԱՄՈԹ Է» ձևակերպումները: Ուստի, թեև Հանձնաժողովի որոշման մեջ քաղաքական խոսքին վերաբերող առանձին գնահատականները դուրս են սույն կարգապահական գործի լուծման համար անհրաժեշտ իրավական գնահատման շրջանակից, այդ հանգամանքը չի ազդում որոշման իրավաչափության վրա, քանի որ Փաստաբանի կողմից օգտագործված վերոնշյալ արտահայտություններն ինքնուրույն բավարար են Կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտում արձանագրելու համար: Այս պայմաններում Խորհուրդը գտնում է, որ Փաստաբանի կողմից օգտագործված վերոնշյալ ձևակերպումները, դիտարկված ամբողջական համատեքստում, դուրս են գալիս փաստաբանի արտահայտվելու ազատության թույլատրելի սահմաններից այն մասով, որով դրանք ոչ թե քննադատում են կոնկրետ գործողություն, որոշում կամ իրավական դիրքորոշում, այլ ընդհանրացված և արժեզրկող գնահատականներ են տալիս իրավապահ և դատական համակարգի մասնագիտական խմբերին: Նման վարքագիծը համատեղելի չէ փաստաբանի հատուկ կարգավիճակից բխող զսպվածության, մասնագիտական կոռեկտության և փաստաբանության նկատմամբ հանրային վստահությունը պահպանելու պարտականության հետ:

Վերոնշյալի հաշվառմամբ՝ Խորհուրդը գտնում է, որ փաստաբանի կողմից խախտվել են Կանոնագրքի 2.2.2 ենթակետի պահանջները:

Վերոգրյալի հիման վրա Խորհուրդը գտնում է, որ Հանձնաժողովը ճիշտ է գնահատել գործի փաստական հանգամանքները և հիմնավոր կերպով արձանագրել, որ փաստաբան Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանի վարքագծում առկա են «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 ենթակետի խախտման հատկանիշներ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և նկատի ունենալով, որ Բողոքում ներկայացված չէ բավարար հիմնավորում «Փաստաբանության մասին» օրենքի 39.11-րդ հոդվածի 8-րդ

մասի 2-րդ կետով Որոշումը վերացնելու համար, ուստի՝ այն պետք է թողնել անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 20-րդ կետի, 39.11-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետի և ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.03.2026 թվականի «Փաստաբան Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննարկելու մասին» թիվ ԿԳ-25089-2-Ա որոշման դեմ Հովհաննես Վլադիմիրի Խուդոյանի կողմից 09.06.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:
2. ՀՀ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի 18.03.2026 թվականի թիվ ԿԳ-25089-2-Ա որոշումը թողնել անփոփոխ:
3. Հանձնարարել Խորհրդի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Ցոլակ Մարգարյան**

07 հուլիսի 2026թ.
թիվ ԿԳ/18-Ա
ք. Երևան